

2674

491.99-5

4-75

2010

3-80

**ԳՐԱԲԱՌ ԲԱՅԵՐԻ
ԽՈՆԱԲՀՈՒՄԸ**

ՄԻ ԱՂԻՍԱԿԻ ՄԷՋ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԹՐԻՆԵՑ Կ. ԿՈՍՏԱՆԵՆՑ.

2002

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարանում

1881

491.542-5
4-75

431.542-5
9-75
48.


ԳՐԱՐԱՆԻ ԲԱՅԵՐԻ

ԽՈՇԱՐԶՈՒՄԸ

ՄԻ ԱՂԻՒՍԱԿԻ ՄԷՋ.

ԳՐԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ԴՐԱՄԷ ԶԱՆԴԱՆԱԿԱՆ ԳՐԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՐԱՐԱՆԻ ԲԱՅԵՐԻ

ՅՕՐԻՆԵՑ Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարանում
1881

1209


12050

493819 493819

9440849494

9440849494

Дозволено цензурою. Тифлисъ, 8 Декабря 1880 г.



1415
39

11.1.14

Типография И. Мартиросианца, на Орб. ул. д. № 5.

ՅԱՌԱԶԱՐԱՆ

Այս աղբւսակը կազմելիս եւ առաջնորդուած եմ եղել այն գաղափարով, որ միայն զեռակցաբար ուսածն է կենդանի ուսում, եւ այն ամէնը, որ այլպէս չէ, մեռեալ ուսումն է:

Ապացոյց, որ մեր դպրոցներում գրաբառ սովորողներ թիւը բաւական չափ է, բայց զեռակցողներ թիւը շատ և շատ աննշան: Գորա պատճառը, եթէ ոմանք ասեն զգրաբառի կենդանի լեզու չլինելը, եւ կ'ասեմ, որ զլրատորապէս ուսուցանելու ռիսակ եւ զանախն է:

Եւ ունիմ աչքիս առաջ մի մեծ ուսումնարան, ուր եթէ ոչ արտաքին գիտութիւնները գէթ մեր մայրենի լեզուն և Հայրենական ուսումները Համեմատաբար շատ լաւ են աւանդուում, այդ ուսումնարանն է Էջմիածնի Գէորգեան ձեմարանը: 1878-ին երբ եւ ուսուցիչ մտայ այդ ձեմարանը, թէ եւ նշանակուած էի Հայոց մատենադրութիւն, Հայոց պատմութիւն և Հայոց աշխարհագրութիւն ուսուցանելու, բայց որովհետեւ Հայկաբանութեան ուսուցիչ չունէին, առ ժամանակ ստանձնեցի և Հայոց լեզուի ուսուցչութիւնն երկու դասարանում, այդ դասարաններն էին Գ. և Գ.-ը, եւ դուայ, որ աշակերտներն առել են լեզուի ճաշակը, մարժ են կարգացածի ընդհանրութիւնն Հասկանալուն և բաւական ազատ շարադրում են: Բայց մի բան ինձ շատ և շատ զարմացում էր և վրդովում, որ աշակերտները բնաւ չէին Հասկանում քերականական ձևերը, թէ եւ անունները գիտէին, չէին Հասկանում ուղիղ հորովել և խոնարհել կամ չէին կարող մի որ և է քերականական ձևի մասին Հարցմանն ուղղակի պատասխանել:

Խօսքս, ի Հարկէ, մեծամասնութեան վերայ է, այլ ոչ բացառութիւններէ: Երկար փորձերց յետոյ ես համոզուեցայ, որ մեծ մասը թուրքական տէրութեան ստիճանն է: Այս, որ կոչուած էր աշակերտներէն յառաջ տանելու, նոյն իսկ Գ. և Ն. դասարաններում անգամ ստիճանած էին կրկնել տալ քերականութեան Ա. մասը և շատ անգամ կանգ էին առնում վերլուծութիւններ անել տալու, թէ և այդ մեզ յետ էր ձգում մեր գործը: Չեմ կարող պարծենալ թէ այդ մասով մի յեղափոխութիւն ձգեցի աշակերտներին դիտութեան մէջ, բայց այս մէկը նոցա մէջ լաւ տպւորութեամբ, որ ամէն կարգացածի վերայ կանգ էին առնում, մտածում էին և աշխատում էին իրենք իրենց հաշիւ տալու: Ի Հարկէ ուրիշ դրած էինք վերայ ես նոր տուն շինել չէի կարող:

Ճեմարանի օրինակը բերելով ես նպատակ չունիմ ոչ ոքի պատիւը մայր ձգելու: Այս պատճառս եմ հրապարակաւ յայտնելու, որ Հայկաբանութեան նախկին վարժապետը շատ շուտով և յաջողութեամբ արմատացուցել էր աշակերտներին մէջ լեզուի ճաշակը, որ շատ սակաւներէն կը յաջողի:

Ճեմարանի օրինակով իմ նպատակս էր արայուցանել թէ խարտսիկ է այն Հեշտութիւնը, որ ծնուցանում է մեծամեծ դժուարութիւններ: Հեշտ էին ուսել աշակերտները, աղայ ժամանակի, երբ մտքերը սուր էր, կարող էին շատ բառեր ու դարձաւորներ գուցէ և ամբողջ գրքեր ծայրէ ծայր անգիր անել, բայց երբ վերայ է գալիս խելահասութիւնը, երբ կասկածոտութեան և հարցասիրութեան տաղնապը պաշարում է նոցա, այն տեղ Հեշտեղիւ կը ակալութեանը մատչելի ճարտասանական փայլուն ոճը խոնարհում է տրամաբանական և պատմափաստական չոր ու ցամաք քննութեան առաջ, այնտեղ հարցմունքները մնում են անպատասխանի, կարգացածի ուղիղ հասկացողութիւնը մատնադրութեան ուսումնասիրութեան մէջ գնում է թոյլ և կող

իկալ . . . այնտեղ յառաջ է գալիս վհատութեան նման մի բան, որ կարօտ է ուսուցչի քաջալերութեանը և տոկուն համբերութեան: Այս ոճ է այս բոլոր դժուարութիւնները մայրը, եթէ ոչ Հեշտ մեքենայական ուսումը:

Այս ասելով ես չեմ ուզում պնդել թէ քերականութեան ուսումը պէտք է դժուարացնել, այդ ինքն լատ ինքեան դժուար ուսումն է. հարկաւոր է, որ այդ ուսումն Հեշտանայ և Հեշտանալ կարող է միայն դիտակցութեան շնորհիւ: Չհասկացող աշակերտն ի՞նչ օգուտ կը տանի իւր անգիր արած թուրքից թուաբանութեան մէջ. ո՞չ ապարէն թուաբանութեան ուսումը դիւրեմբանելի է միայն դիտակցութեան, հասկացողութեան շնորհիւ. այլապէս այդ ուսումը թոյն է ուսանող մտքի համար: Նոյնն է և քերականութեան մէջ:

Տեսական դիտութիւններէ մէջ դիտակցական ուսմանը շատ նպատաւոր է վերլուծական ուսումը, մասերի հիմնաւոր ուսումն նասիրութիւնից Հեշտ է անցնել ընդհանուրին, divide et impera! մաս մաս բաժանելով և իւրաքանչիւրին տէր դառնալով դու տէր ես և ամբողջին: Քերականութեան մէջ այդ եղանակը ամենից օգտաւէտն է:

Պետի հարցուի թէ ինչո՞ւ բայերից եմ սկսել աղիւսակս. դոքա պատասխանն է՝ նախ որ քերականութեան ա. մասի մէջ ամենից դժուարը բայերի ուսումն է և ինչքան որ ես ճեմարանում նկատեցի, բայերի կատարելը կազմելու մէջ շատ սխալներ էին անում. երկրորդ որ բայերի Հիմնաւոր ուսումնասիրութիւնից սկսելը մեծ օգուտ ունի առ հասարակ քերականութեան և լեզուի ուսման մէջ. մանաւանդ որ բայով ինքնուրոյն միտք յայտնել կարելի է, իսկ միւս բանի-մասերը չունին այդ յատկութիւնն և աւելի կաշկանդուած վիճակի մէջ են:

Իմ աղիւսակս ներկայացնում է բայերի մասերն և ամբողջ

ղութիւնը: Ինչ որ թերի է նորա մէջ, այն կըլլացնէ «Կախա-
գիտելիքը», ինչ որ թերի է վերջինիս մէջ, այն կըլլացնէ Ա-
ղեասկը:

Եւ չունիմ նպատակ քերականութիւն դրելու. այդ յան-
դըղնութիւնն Աստուած Հեռու անէ ինձանից. իմ ձգտումն է
միայն մասնացոյց լինել մի նոր եղանակի վերայ. այդ պատճա-
ռով էլ իմ նախագիտելիքն մէջ չէ մտել ամենայն մանրամասնու-
թիւն. բացատրելով խոնարհումի ընդհանուր կանոններն, եւ խոյս
եմ տուել ձևերի քննութիւնից և անուանակոչութեան յարմարն
և անյարմարը կշռելուց. այդ ինձ Համար երկրորդական նշանա-
կութիւն ունէր:

Իմ առաջարկածս ձևով եւ դասատուութիւն արած չեմ
ձեմարանում, որովհետեւ Ա. և Բ. դասարաններն իմ ձեռքս եղած
չէին: Ուրեմն առ Հասարակ դպրոցական դասատուութեան մէջ
փորձած չեմ. բայց մասնաւոր դասերի մէջ փորձել եմ այդ ուղ-
ղութեան յաջողութիւնը:

Այսքանս իբրեւ ծանօթութիւն բաւական լինի. անպաճը
կըլծուիմ բանաբնութեան անաչառ դասատուանին և զործա-
ղութեան Հետեանքներին:

Կ. Կ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Նախագիտելը. Ա) 1 ծորդ, եր. 9.

Բ) Խոնարհում, եր. 10.

Գ) Զեւերի կազմութիւնը.

ա) Առաջին ըաղաղընչ, եր. 11.

բ) Անցեալ կատարեալ, եր. 12.

գ) Ներկորդ ըաղաղընչ, եր. 14.

Դ) Բացառութիւններ, եր. 16.

2. Յանդերի աղիւսակ.

3. Օրինակներ.

4. Խոնարհումները աղիւսակ:

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Ա. ԼԾՈՐԴ

1. Բայի սկզբնական ձևը կոչուում է լծորդ:

2. 1 ծորդը չորս տեսակ յանգ ունի, որ են՝ ալ, ել, իլ, ուլ:

Միայն գոլ էական բայը բացառութիւն է:

3. Այս յանգերը միանում են արմատին կամ յօդով կամ առանց յօդի:

4. Յօդը մի մասնիկ է, որ գրուում է լծորդի արմատի և յանգի մէջ-տեղը: Բոլոր յօդերը սոքա են՝ ն, ան, էն, չ, նչ, աչ, և անչ:

5. Ուրեմն յօդին նայելով երկու տեսակ լծորդ կայ—յօդաւոր և անյօդ:

6. Յօդաւոր են՝ խոստ-ան-ալ, բարկ-ան-ալ, դառն-ան-ալ, ել-ան-ել, իջ-ան-ել, մտ-ան-ել, ուս-ան-իլ, բուս-ան-իլ, մեռ-ան-իլ, զբօս-ն-ուլ, զարթ-ն-ուլ, քաղց-ն-ուլ, փախ-չ-իլ, հանգ-չ-ել և այլն.

7. Նչ յօդ ունեցող բայերն ընդ ամէնը չորս են. 1) երկ-նչ-իլ, 2) մարտ-նչ-իլ, 3) կոր-նչ-իլ և 4) յար-նչ-իլ:

Աչ և անչ յօդ ունեցող բայերն երկուս են. 1) ճան-աչ-եմ, 2) մեղ-անչ-եմ:

8. Անյօդ են՝ կարդ-ալ, դող-ալ, խաղ-ալ, երգ-ել, գր-ել, նկար-ել, շահ-իլ, դատ-իլ, աշխատ-իլ, զեղ-ուլ, զեն-ուլ, թող-ուլ և այլն:

9. Անյօդ են նմանապէս և սերման-ել, խափան-ել, կործան-ել, յանդիման-ել, դարման-ել, բաժան-ել, ժաման-ել, ըմբռն-ել, կանգն-ել, մատն-ել, յայտն-ել բայերը և սոցա նմանները. որովհետեւ դոցա միջի աւ և ն մասնիկները յօդ չեն, այլ բայարմատի անբա-ժան մասերն են:

10. Անյօդ են նմանապէս և կանչ-ել, կռուանչ-ել, մռնչ-ել, մնչ-ել, կռնչ-ել բայերը և սոցա նման-ները, որովհետեւ սոցա մէջ նշ արմատական է:

Բ. ԽՈՆԱՐՀՈՒՄՆ

11. Լծորդը մի անորոշ ձև է, այսինքն չունի ոչ ժամանակ, ոչ եղանակ, ոչ դէմք և ոչ թիւ, բայց կարելի է նորան մի որոշ ձև տալ. Լծորդի որոշ ձև առնելը ասուում է խոնարհումն:

12. Ընդ ամէնն 9 խոնարհում կայ. այս է նո-ցա օրինակների դասաւորութիւնը.

Ա. արգել-ուլ. Բ. հաւատ-ալ. Գ. բաժան-ել. Դ. բնակ-իլ. Ե. զարման-ալ. Զ. թռ-չ-իլ. Է. զարթ-ն-ուլ. Ը. ել-ան-ել. Թ. ուս-ան-իլ:

Դ. ՁԵՒԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

ա) Առաջին բաղադրիչ

13. Բայերի խոնարհումի մէջ երկու գլխաւոր ձև կայ, որոնցից կազմուում են բոլոր միւս ձևերը. Առաջինն է՝ Սահմանական եղանակի ներկայն. երկրորդն է՝ Սահմանական եղանակի անցեալ կատարեալը:

14. Սահմանականի ներկայն կազմուում է այս-պէս. Լծորդի յանգը ձգոււմ են և նորա տեղը դնում են Սահմանական ներկայի պատշաճաւոր յանգը, ինչ-պէս որ յանգերի աղիւսակում նշանակուած է:

15. Սահմանական ներկայի եզակի 3 դէմքը կոչուում է առաջին բաղադրիչ, որովհետեւ սորանից կազմուում է 3 ձև.

ա) Սահմանականի անցեալ անկատարը.

բ) Ստորադասականի ապառնին.

և գ) Հրամայական-արգելականի ներկայն:

16. Սահմանականի անցեալ անկատարը կազ-մելու համար պէտք է առնել ա. բաղադրիչը և նորան աւելացնել անցեալ անկատարի յանգերը եզ. 1) ի, 2) իր, 3) ր.

յօդն. աք, իք, ին.

ա) Անկատար եզ. 3 դէմքի մէջ բաղադրիչն ա յանգը փոխու-ում է ոյ՝ Ա. և Ի. խոնարհումների մէջ:

բ) Անկառաւր կազմելու ժամանակ բաղադրելի է յանդը փոխուում է է՝ Դ. Զ. և Թ. խոնարհումներն մէջ:

17. Ստորագասականի ապառնին կազմելու համար պէտք է առնել ա. բաղադրիչը և նորան աւելացնել Բ. Գ. Ե. և Ը. խոնարհումների մէջ՝ ց-եմ, Դ. Զ. և Թ. խոնարհումների մէջ՝ ց-իմ, և Ա. ու Է. խոնարհումների մէջ ց-ում. և ապա խոնարհել սահմանական ներկայի նման:

Ստորագասականի ապառնին կազմելու ժամանակ բաղադրելի է յանդը փոխուում է է՝ Դ. և Ը. խոնարհումներն մէջ:

Ն. Ստորագասականի նշանը միայն չ գիրն է:

18. Հրամայական-արգելականի ներկայն կազմելու համար պէտք է ա. բաղադրիչի առջևը դնել Ռեմակբայր. իսկ վերջը աւելացնել՝ եղակին—ր և յոդանակին—հ.

Հրամայական-արգելականի եղակին կազմելու ժամանակ՝ ա) բաղադրելի ոչ յանդի չ գիրը դնելի է՝ Բ. և Ե. խոնարհումներն մէջ. բ) բաղադրելի է յանդը փոխուում է է՝ Դ. և Ը. խոնարհումներն մէջ.

բ) Անյեալ հարաբերակցություն

19. Սահմանականի անցեալ կատարեալը կազմելու համար նախ և յառաջ պէտք է իմանալ լրծորդների մի այլ յատկութիւնը: Կատարեալի վերաբերութեամբ 4 կարգի լծորդ կայ. ա) պարզ, բ) յօդառու, գ) յօդափոխ և դ) յօդաձիգ:

20. Կան լծորդներ, որոնք անյօդ են և կատարեալի մէջ էլ անյօդ են մնում: այդպիսիները կոչւում են պարզ: Բոլոր այն լծորդները, որոնք անյօդ են և վերջանում են ալ յանդով, պարզ են. հեղուկ, արգելու:

21. Կան լծորդներ, որոնք անյօդ են, բայց կատարեալի մէջ յօդաւորուում են. այդպիսիները կոչւում են յօդաւոր: Բոլոր այն լծորդները, որոնք անյօդ են և վերջանում են՝ ալ, էլ, ել յանգերով, յօդառու են. կարդ-ալ, խնդ-ալ, երգ-ել, բաժան-ել, շահ-իլ, աշխատ-իլ:

22. Կան լծորդներ, որոնք յօդաւոր են և կատարեալի մէջ իրենց յօդը փոխում են, այդպիսիները կոչւում են յփոխորդ:

Յօդափոխ են — 1) այն լծորդները, որոնց յանգն է՝ ալ և յօդն է՝ աւ կամ էն. խոստ-ան-ալ, մոռ-ան-ալ, մերձ-են-ալ. 2) այն լծորդները, որոնց յանգն է՝ ել և յօդն է չ կամ նչ. փախ-չ-իլ, թռ-չ-իլ, երկ-նչ-իլ. 3) այն լծորդները, որոնց յանգն է՝ աւ և յօդը ն կամ էն.* զարթ-ն-ուլ, քաղց-ն-ուլ, ընկ-են-ուլ, ըզգ-են-ուլ:

*ՄԱՆ. Այս կանոնից բացառութիւն են կազմում աւ վերջացած 12 լծորդ, որոնց մասին տես Է. խոնարհումի բացառութիւնները:

23. Կան լծորդներ, որոնք յօդաւոր են, բայց

կատարեալի մէջ իրենց յօդը կորցնում են. այդպիսիները կոչուում են յօդաչիւղ:

Բոլոր այն լծորդները, որոնք յօդաւոր են և վերջանում են էլ և իլ յանգերով, յօդաձիգ են. ել-ան-ել, մու-ան-ել, ուս-ան-իլ, ագ-ան-իլ:

24. Կատարեալի յօդը. ա) կատարեալի յօդերն են՝ աց, եց, ց, ե. բ) յօդառու և յօդափոխ լծորդների մէջ կատարեալն յօդաւոր է:

25. Կատարեալի յանգը. ա) երկու տեսակ յանգ ունի կատարեալը — է և ա. առաջինն (ի) յատուկ է ներգործական սեռին, երկրորդը (այ) — կրաւորականին. բ) ներգործականը են՝ 1) պարզ լծորդները, 2) յօդառու ա, էլ վերջացած լծորդները, 3) յօդաձիգ էլ վերջացած լծորդը. գ) կրաւորականը են՝ 1) յօդառու՝ իլ վերջացած լծորդը. 2) յօդափոխ՝ ա, էլ, ու վերջացած լծորդները և 3) յօդաձիգ էլ վերջացած լծորդը: (Տես յանգերի աղիւսակ:)

4) Երկրորդ Բաղադրիչ

26. Անցեալ կատարեալի եզակի երրորդ դէմքը կոչուում է բ. բաղադրիչ, որովհետեւ սորանից կազմուում է 4 ինքնուրոյն ձև. 1) Սահմանափակի ապառնին. 2) Հրամայական-բուն ներկայն, 3) Հրա-

մայական-բուն ապառնին և 4) Դերբայ անցեալ:

ՄԱՆ. Կրաւորականի բայերի մէջ այս ձևերը կազմելու ժամանակ պէտք է ձգել ա յանգը:

Կատարեալի եզակի 3 դէմքը կազմելու ժամանակ, եթէ բաղադրիչը միախնդի է, նորա առջևից պէտք է աւելացնել է, Թէ որ բառը բաղաձայն դրով է սկսուում, և է, Թէ որ ձայնաւորով: Այդ է և է ձայնաւորները կոչուում են վերաւորի կամ աճեցումն, augmentum): Վերադերն յատուկ է միայն կատարեալի եզ. 3 դէմքին և չի կարող դանուել ոչ բ. բաղադրիչի վերայ և ոչ նորանից կազմուած ձևերի վերայ: Միայն փա, րա, րաւ, արտուղի բայերի մէջ վերադերը դանուում է և այլ ձևերի վերայ. օրինակ. ե-ի-ի, ե-աու, ե-դ-ի, ե-ի-եալ, ե-դեց, ե-դ-եալ և այլն:

27. Սահմանական ապառնին կազմելու ժամանակ պէտք է բ. բաղադրիչին աւելացնել՝ ներգործայանգին — ից, կրաւորականին — այց:

Սահմանական և Հրամայական ապառնին կազմելու ժամանակ բաղադրիչի յօդի ց գիրը փոխուում է ա, երբ որ նորան յաջորդէ ց կամ ջ գրով սկսուող յանգ. Կարդ-աց-ցես = կարդասցես, դարմ-աց-ջեր = դարմասջեր: Բացառութիւն են միախնդի բաղադրիչները և զգեսուլ, ընթեսուլ լծորդները:

28. Հրամայական-բուն ներկայն կազմելու համար պէտք է բ. բաղադրիչին աւելացնել՝ ներգործայանգին — ա, էք, կամ ոչինչ, կրաւորականին իր, էք, լուք:

Հրամայական-բուն ներկայի եզակին կազմելու ժամանակ բաղադրիչի է յանգը զնգնել է 2. խոնարհութիւն մէջ:

29. Հրամ. բուն ապառնին կազմելու համար պէտք է բ. բաղադրիչին աւելացնել — ջեր, ջեր:

30. Դերբայ անցեալ կազմելու համար պէտք է բ. բաղադրիչին աւելացնել — եալ:

Դ. ԲԱՅԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

31. Բոլոր բայերի մէջ երեք կարգի բացառութիւններ կան. ա) անկայուն բայեր. բ) պակասաւոր բայեր և գ) արտուղի բայեր:

32. Անկայուն են այն բայերը, որոնց ա. բաղադրիչն իրենց խակական խոնարհումի վերայ է, իսկ բ. բաղադրիչը շեղուում է կամ յօդով և կամ յանգով և ամբողջապէս կամ մի քանի ձևերով խոնարհուում է մի այլ կանոնաւոր խոնարհումի վերայ: Այդ բայերն և իրենց յատկութիւնները տես աղիւսակի մէջ Բացառութիւնների կարգում:

33. Պակասաւոր են այն բայերը, որոնք խոնարհումի բոլոր ձևերը չունին, այլ մի քանիսը միայն: Երկու տեսակ են պակասաւորները. ա) այնպիսիները, որ կատարեալ չունին. երթալ, ել, ունել, պարտել, լինել, դողել, գոլ. սոցա ա. բաղադրիչն և նորանից կազմուած ձևերը կանոնաւոր են. միայն ԳԳԷՂ լծորդը չունի ա. բաղադրիչ. այդ լծորդի մէջ ծանօթ ձևերը բ. բաղադրիչից են, որ է ԳԳԷ: բ) Այնպի-

սիները, որոնց լծորդը, ուրեմն և ա. բաղադրիչը մեզ ծանօթ է, այլ յայտնի է միայն կատարեալը, ուրեմն և բ. բաղադրիչը. կերի, արբի, ծանեայ, մեղայ, լուայ, չողայ. սոցանից կազմուած ձևերը՝ մասնաւոր բացառութեամբ կանոնաւոր են: Տես Աղիւսակ, Բացառութիւններ:

Պակասաւոր բայերի թերին լրացոււմ են՝ կանոնաւոր բայերից փոխ առնելով:

ՍՄՆ. Եթէ կամենայինք Բ. Պակասաւորների լծորդը ենթադրութեամբ գտնել, այսպէս պէտք է լինէր. կեր-ուլ, արբ-ուլ (կամ կեր-ան-ել, արբ-ան-ել) ծան-չ-ել (ճան-աչ-ել), մեղ-ան-իլ կամ մեղ-ն-ուլ (մեղ-անչ-ել), լու-ան-իլ, չող-ան-իլ կամ չող-ն-ուլ: Բայց այս տեսակ լծորդներ, բացի ճանաչել՝ և մեղանչել՝, չկան:

34. Արտուղի են այն բայերը, որոնց արմատի արտաքին ձևն էլ փոփոխուում է յօդի և յանգի ազդեցութեան տակ. այդ բայերն են՝ դալ, տալ, առնել, դնել այս կարգում կարելի է հաշուել և Եղանի լծորդը, որի կատարեալը տարբեր խոնարհումն ունի (եղէ, եղե, ապ. եղէց, եղ-ից-իս): Տես Աղիւսակ, Բացառութիւններ:

35. Կան բայեր, որ միևնոյն ձևից երկու տեսակ ունին, օրինակ՝ սզացի, սզացայ, բնակեցի, բնակեցայ. այդպիսիները չեն կարող բացառութիւնների

36. Բայերի երկրորդական, այսինքն, գերակա-
տար, յարակատար և այլ սոցա նման ձևերի վերայ
տեղեկութիւն տալը կախուած է վարժապետից: Նոցա
կազմելու եղանակը պարզ է ինքնրստինքեան:

Յ Ա Ն Գ Ե Ի Ի Ա Ղ Ի Ի Ս Ա Կ																
Բաղադրել		Ա Ռ Ա Ջ Ի Ն								Ե Ր Կ Ր Ո Ր Գ						
Եղանակ.		Սահմանական.				Ստորագատական.				Սահմանական.				Հրամայական բուն.		Դեր-բայ
Ժամանակ.		Ա. Ներկայ				Բ. ա. ան-կատար				Բ. կատարելալ				Բ. ա. ապագանի.		Դ. ան-կատարել
Ժեւ. դեմք																
Եղանակ		ամ	եմ	իմ	ում	ի.	ց-եմ	ց-իմ	ց-ում	ի.	այ.	եց.	այց.			եալ.
1.		ամք	եմք	իմք	ումք	աք.	ց-եմք	ց-իմք	ց-ումք	աք.	աք.	ցուք.	ցուք.			
2.		աս.	ես.	իս.	ուս.	եր.	ց-ես	ց-իս	ց-ուս	բ.	եր.	աք.	ցես.	ցիս.	ւ.	լեր
3.		աք.	էք.	իք.	ուք.	եր.	ց-էք	ց-իք	ց-ուք	ք.	եր.	այք.	ջեր.	ջիք.	էք.	լք.
4.		այ.	է.	ի.	ու.	բ.	ց-է	ց-ի	ց-ու		այ.	ալ.	ցի.	ցի.		
5.		ան.	են.	ին.	ուն.	ին.	ց-են	ց-ին	ց-ուն		ին.	ան.	ցեն.	ցին.		

Օ Ր Ի Ն Ա Կ Ն Ե Ր								
Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Ջ.	Ե.	Ը.	Թ.
արդեւ-ու.	հաւատ-ալ.	լաւ ան-ել.	լինալ-ել.	դարձան-ալ.	Թաւ-ել.	դարձ-ան-ու.	կէ-ան-ել.	ուս-ան-ել.
յաւել-ու.	խաղ-ալ.	շարժ-ել.	շահ-ել.	մոռ-ան-ալ.	մատ-ել.	վախ-ու.	արկ-ան-ել.	անկ-ան-ել.
կեղ-ու.	դն-ալ.	հրամայ-ել.	խօս-ել.	մեք-են-ալ.	կործան-ել.	սղակ-ն-ու.	սպան-ան-ել.	մեռ-ան-ել.
հեղ-ու.	լ-ալ.	մատն-ել.	յողն-ել.	դօր-ան-ալ.	հանգ-ել.	քաղց-ն-ու.	հատ-ան-ել.	ծն-ան-ել.
դին-ու.	կարդ-ալ.	դոչ-ել.	երեւ-ել.	ստ-ան-ալ.	Թաք-ել.	ցաս-ն-ու.	անց-ան-ել.	բուս-ան-ել.
			կոչ-ել.				մատուց-ան-ել.	օծ-ան-ել.
			շին-ել.				զղեցուց-ան-ել.	դո-ան-ել.
			խաղ-ան-ել.				արբուց-ան-ել.	կորուս-ան-ել.

Բ Լ Յ Լ Ռ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

[illegible]

Գինն է { Հատուկ վաճառելի 25 կոպ.
 Գումարով » 20 »

Նոյն հեղինակի հետևեալ երկասիրութիւններն
 վաճառվում են իւր մօտ և Կենտրոնական գրավաճառ-
 աանոցում:

Ա. Հիւսուածք՝ 3 հատոր 3 ռ. —

Բ. Հայոց հեթանոսական կրօն 30 կոպ.

2674

2013

« Ազգային գրադարան



NL0061477

